

Եւ ոչ յունական իշխանութեանց ծանրանալ եւ թէ ինք եւս յունական իշխան եւ հպատակ էր կայսեր եւ թէ գաւառի մը ամբողջ տներն էր նոյն կայսեր շնորհիւ»։ Բայց երբ տեսաւ թէ յոյնք իւր քաշութիւնը երկիւղի նշան համարելով սկսան բռնակալ եւ իր մարդիկը զինաթափ ընել շանալ, եւ նոցայ գլխաւորը համարձակեցաւ զեն ի ձեռին իր վրայ յարձակելով սուրն ուզելու, ան ատեն.

— Սո՛ւր կ'ուզէք, առէք ձեզի սուր, հապա՛, տղաք, ձեզ տեսնեմ, սո՛ւր սոցայ վրայ,— գոչից Գուրգէն:

Եւ նախ գլխաւորն ինք զոհ գնաց իւր ահագին սրոյն, եւ քանի մը վայրկեանի մէջ այդ յունական խումբը ցիրուցան դաշտին վրան քսանէ աւելի մեռել կը թողուր եւ մնացորդը վայրավատին կը փախչէին:

Իսկ երբ Յովնան եւ մեծ խումբը հասան տեսան եղածը եւ Գուրգէն, որ քանի մը կալանաւոր կը հարցաքններ, յայտնի եղաւ այս գործողութեան բուն պատճառն:— Գրիգոր, Բագրատունեաց ցեղէն մէկը, Իշխանիկ մականունանեալ, Արամանեակ եւ Աշխարհաբերդ ամրոցներու կը տիրէր ժառանգութեամբ ճիշտ յունաց սահմանագլխուն վրայ: Եւ այսպիսի անորոշ դիրքի մէջ ոչ կայսեր յարկ կ'ուտար եւ ոչ ամիրապետին: Յունաց Կարնոյ զօրավարն այսպիսի անկարգութեան վերջ տալ ուզելով եկեր պաշարեր էր Արամանեակ բերդը: Իր զօրքերէն հարիւրի չափ պահապանաց խումբ մը հանդիպելով Գուրգէնի եւ շարդուբուրդ փախստական, պիտի տանէին լուրը բանակը եւ պիտի գրգռէին Գուրգէնեանց ու Յովնանեանց դէմ նոցայ բոլոր զօրութիւնը: Եւ այսպէս մեր փոքրիկ գունդը, որ հայկական արդարութեան եւ վրէժխնդրութեան պաշտօն էր ստանձնել ձախ թելին վրայ արաբացիքն ունէր եւ աջ թելին վրայ յոյներն: Խորհուրդի նստան մեր չորս զօրավարները, որոց թիւը զօրաց թուոյն հետ բաղդատեալ շատ էր եւ չափազանց, բայց չորսն էլ իրենց օրինակաւ կը վարէին զօրքը՝ որք անմոռնչ եւ սիրով կ'երթային ո՛ւր որ սոքա զիրենք տանէին: